10035392

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

*0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511-770, Ֆաքս: (00374 10) 511-757*

№ ԴԴ-1Ե-1305

«24» մարտի 2012թ.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ջավադյան.*

Ի լրումն ՀՀ դատական դեպարտամենտի 29.11.2011թ. թիվ ԴԴ-1 Ե-6369 գրության՝ ուղարկում եմ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ դատական դեպարտամենտի կարծիքը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ԾԻՍԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատարող՝ կազմակերպաիրավական վարչություն
Հեռախոս՝ 511-784

ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված՝ ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) 204.1-րդ, 204.2-րդ, 204.3-րդ, 204.4-րդ, 204.5-րդ, 204.6-րդ, 204.7-րդ, 204.8-րդ, 204.9-րդ և 204.10-րդ հոդվածներով լրացնելու վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) կապակցությամբ հարկ ենք համարում ընդգծել, որ վերոնշյալ հոդվածների սանկցիաներում նախատեսված՝ ազատազրկման ձևով պատիժաչափերը չափազանց խիստ են: Կարծում ենք, նման խիստ պատժաչափերի նախատեսումը.

1) Չի բխում առաջին հերթին Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներից (սոցիալական արդարության վերականգնում, պատժի ենթարկված անձի ուղղում, հանցագործությունների կանխում):

2) Խաթարում է Օրենսգրքում առկա՝ հանցագործութունների և դրանց համար նախատեսված քրեաիրավական ներգործության միջոցների (այդ թվում՝ պատժի) համաչափությունը: Օրինակ՝ Նախագծի 204.5-րդ հոդվածի 6-րդ մասի և 204.7-րդ հոդվածների 3-րդ մասի սանկցիայով նախատեսված է ազատազրկում հինգից տասներկու տարի ժամկետով այն պարագայում, երբ, օրինակ, Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով արգելված արարքի համար նախատեսված է ազատազրկում ութից տասնհինգ տարի ժամկետով: Մեջբերված օրինակների համեմատությունից կարելի է եզրահանգել, որ մարդու կյանքի դեմ ուղված և տնտեսական գործունեության դեմ ուղղված (և, ըստ էության, խարդախության մասնավոր դրսևորում հանդիսացող) հանցագործությունների համար Օրենսգրքում կարող են սահմանվել գրեթե հավասարաչափ սանկցիաներ:

Մեր կարծիքով, նման մոտեցումը կարող է խոչընդոտել Օրենսգրքի 2-րդ հոդվածում ամրագրված՝ Օրենսգրքի խնդիրների իրականացմանը:

3) Նախորդ կետում նշված համաչափության բացակայությունը կարող է ազդել կոնկրետ գործերով դատարանների կողմից նշանակվող պատիժների արդարացիության վրա: Մեր այս մտավախությունը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Ն. Սարգսյանի* վերաբերյալ 22.12.2011թ. կայացված նախադեպային որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. *«(...) պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործությանը քրեաիրավական միջոցներով արձագանքելու պարտադիրությամբ, ինչպես նաև հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն*

*արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: (…)»* (տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 22.12.2011թ. թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 16-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք Օրենսգիրքը 204.1-րդ, 204.2-րդ, 204.3-րդ, 204.4-րդ, 204.5-րդ, 204.6-րդ, 204.7-րդ, 204.8-րդ, 204.9-րդ և 204.10-րդ հոդվածներով լրացնելու վերաբերյալ Նախագծում նվազեցնել վերոնշյալ հոդվածների սանկցիաներում նախատեսված՝ ազատազրկման ձևով պատժաչափերը և շեշտադրում անել առավելապես գույքային սանկցիաների վրա: